

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ
2025

ՀՈՒՒՍ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ
ԵՎ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ԹԵՍՏ 2

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդա՛ յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող ես դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարելի է օգտագործել սևագրության համար: Ուշադիր եղիր պատասխանների ձևաբուղբը լրացնելիս.

- ընտրովի պատասխանով առաջադրանքներում քո ընտրած տարրերակի համարին համապատասխանող վանդակում դի՛ր X նշանը (միևնույն այունակի մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ),
- 33-38-րդ և 67-69-րդ առաջադրանքներում՝ յուրաքանչյուր առաջադրանքի համապատասխան համարների տակ, դի՛ր X նշաններ:

Մաղրում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում փակազծերում նշված տառը:

- 1) թառան-, այծենակա-, պ-րանք, ճաճան- (չ)
- 2) ա-ճատել, գա-թել, կ-տար, ո-կույզ (ո)
- 3) ժու-կալ, դ-խեմ, խո-ռովել, աշխույ- (ժ)
- 4) ա-բարիշտ, ա-փոփոխ, բա-բասանք, ա-պամած (մ)

2 Ո՞ր շարքի բոլոր բառերի բաղադրիչներն են գրվում անջատ:

- 1) գլուխ(գործոց), հետ(մնալ), հարյուր(հազար)
- 2) ի(հեճուկս), առ(այն), իրար(անցում)
- 3) միտք(անել), հենց(որ), դեմ(դիմաց)
- 4) ըստ(իս), տնե(տուն), քույլ(տալ)

3 Ո՞ր շարքի բոլոր բաղադրյալ հատուկ անունների բոլոր բաղադրիչներն են գրվում մեծատառով:

- 1) ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՌԱՔՅԱԼ, ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՅՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԴԱՎԹԱԿ ՔԵՐԹՈՂ
- 2) ԾՎԵԴԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ՎԵՐԻՆ ԳԵՏԱՇԵՆ, ԱՐԾՐՈՒՆՅԱՅ ՏԻԿԻՆ
- 3) ԱՌՅՈՒԾ ՄՀԵՐ, ՄԵՐՋԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ, ԵԶՆԻԿ ԿՈՂՔԱՑԻ
- 4) ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ, ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՌԱՅԻՆ, ԽՆԿՈ-ԱՊԵՐ

4 Ո՞ր շարքի բոլոր բառերի առաջին արմատն է միավանկ:

- 1) հրկիզել, գրակալ, օրավարձ, կայարանամերձ
- 2) բոշնորս, քաղցրահամ, ձնագնդի, ցլամարտիկ
- 3) հապանցիկ, արձակագիր, գրադարան, թիավարել
- 4) գարեջուր, ուսանող, սրբազն, ձվաճան

5 Ո՞ր շարքի բոլոր բառերում ույերկինչյունի հնչյունափոխություն կա:

- 1) կուսակից, վարագույնել, փութալ, ամազուշորեն
- 2) գումկան, խուզարկու, անզուզադրելի, մրջնաբույն
- 3) ողջունել, բուրյան, գուշակ, բուլակազմ
- 4) կուտակել, անբնական, դաշունահարել, լուսազգայուն

6 Ո՞ր շարքում դարձվածքի իմաստի սխալ բացատրություն կա:

- 1) մազը գերան դարձնել - չափազանցնել, ճայն բարբառող հանապատի - պատասխան չստացած խոսք
- 2) տակից դուրս գալ - ստանձնած գործը գլուխ բերել, սառույցը շարժվել - աղետ պատահել
- 3) կաշին պլոկել - ծայրաստիճան շահագործել, շունը տիրոջը չճանաչել - կարգուկանոն չլինել
- 4) աչքերը կապել - խորամանկությամբ խարել, խաղաքղթերը խառնել - ծրագրերը խափանել

7 Ո՞ր նախադասության մեջ փոխարերական իմաստով գործածված բառ չկա:

- 1) Կայծակի մտրակից խրտնած կարմիր մի նժույզ ծառս եղավ տեղից:
- 2) Մտանոլոր շրջում էր պատաճին՝ հիանալով ականակիտ ու պաղպաջուն աղբյուրների քչչոցով:
- 3) Աղմկում է իմ սրտում ամեն գիշեր մի կարոտ, Աղմկում է որպես խուլ ու հեռավոր մի քամի:
- 4) Ապրելուց քաղցր է մեռնել քեզ համար, Զգալ, որ դու կաս, և լինել հեռու:

8 Տրված բառերից որի՞ որևէ արմատի չի կարող միանալ ամ- նախածանցը և բառ կազմել առանց երկրորդ ածանցի:

- 1) փորագրություն
- 2) խելակորույս
- 3) բթամիտ
- 4) պատեհապաշտ

9 Ո՞ր տարրերակի բոլոր բառազույգերն են կազմված հոմանիշներից:

- 1) լաջվարդ-բոստ, անոթ-թևատակ
- 2) անխափան-արդար, խորշակ-հողմ
- 3) գրավիչ-առինքնող, անվեհեր-աներկյուղ
- 4) քիվ-բազրիք, քծնող-շողոքորթ

10 Ո՞ր տարրերակում են ճիշտ նշված բոլոր այն բառերի համարները, որոնց բառակազմական վերլուծությունը ճիշտ է:

1. թագաղբում= թագ+ա+դ(հ)ր+ում
 2. խորհրդակցում = խորհ+(ու)րդ+ա+կ(հ)ց+ում
 3. բաժանմունք= բաժան+մունք
 4. վայելչագրություն = վայել+(ու)չ+ա+գ(հ)ր+ություն
 5. կառամատույց = կառ+ա+մատույց
-
- 1) 1, 2, 4
 - 2) 2, 3, 5
 - 3) 1, 3, 4
 - 4) 2, 4, 5

11 Ո՞ր նախադասության մեջ պատճառական բայ կա:

- 1) Հատկապես կիլիկյան գրչատների ձեռագրերը շլացնում էին իրենց ճոխությամբ՝ երբեք, սակայն, չխախտելով չափի սահմանագիծը:
- 2) Մի վայրկյան բվում է, թե խորհրդավոր այս կերտվածքը իսկույն ևեք լեզու է առնելու և ասելու, որ ինքը տեսել է հզոր փարավոններին, որոնք կառուցեցին վիթխարի բուրգերը:
- 3) Զեր նշումներին ծանոթանալով՝ եզրակացրի, որ նախագիծը լուրջ շտկումների կարիք ունի:
- 4) Երկար ժամանակ քարացած հայացքով նայում էր խավարի մեջ. հետո նրա պրկված դիմագծերն ասես թուլացան:

12 Ο՞ր նախադասության մեջ մակրայ չկա:

- 1) Եկան, ոռնացին սաղարթներիդ մեջ Ու ոլորելով, ճկելով հատ-հատ՝ Դալար ճյուղերդ փշրեցին, տարան:
- 2) Տեղ հասնելով՝ նորեկները կապոցները դիզեցին մի քարի մոտ, գնացին խառնվեցին մատուտի մեջ խցկված ամբոխին, որ եռանդով աղոթում էր այնտեղ:
- 3) Չուր եմ փախչում, ինձ խարում. Հազար կապ է ինձ կապում:
- 4) Ես դուրս եմ գալիս՝ նորից շրջելու Նեղ փողոցներն ու կրկեսները բաց:

13 Ο՞ր շարքում են ճիշտ նշված բոլոր այն բայերի համարները, որոնք չեզոք սեռի են:

*Ես միշտ էլ էսպես անրախտ 1. կյիմեն:
Մանուկ օրից են դեռ ինձ 2. անիծել...
3. Ասում են՝ մի օր, ես՝ օրորոցում,
Մի պառավ դարվիշ մեր տուն 4. Է զայիս,
Իր խաղճ ասում է ու բաժին 5. ուզում,
Իմ նամք նրան բաժին 6. Ճի տայիս:
7. -Կորիկ, -ասում է, -կորիկ մեր դռնից,
Երեխաս 8. ծարեց, 9. հեռացիկ, 10. զնա՛...*

- 1) 1, 4, 7, 8, 9, 10
- 2) 1, 2, 3, 5, 6, 7, 8
- 3) 2, 3, 4, 6, 7, 9, 10
- 4) 2, 4, 5, 7, 9, 10

14 Ο՞ր շարքի բոլոր բառերի հոգնակի թիվն է կազմվում -եր վերջավորությամբ:

- 1) գծագիր, առանձնատուն, կաղնեփայտ, հիմնապատ
- 2) սաղցաշերտ, շնաձուկ, մեղրամոմ, դեղաբույս
- 3) նախագիծ, որսաշուն, առակագիր, մեծատառ
- 4) տոնածառ, ակնաբիթ, ընդդիմախոս, որմնասյուն

15 Ο՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում *ամ* հոլովնան:

- 1) ձգտում, մանուկ, շքադրու
- 2) բեռ, քոռ, հանգիստ
- 3) ծունկ, ամառ, ազգանուն
- 4) լեռ, անկյուն, շարժում

16 Ο՞ր նախադասության մեջ միջոցի անուղղակի խնդիր կա:

- 1) Սամոյերե մեծ օճիքով վերարկուն հազին՝ նա շրջում էր Սյունիքում՝ միջոցներ որոնելով աղետի դեմն առնելու համար:
- 2) Եվ ահա այդ նպատակով էլ նա հասավ Հարանց հոչակավոր անապատ, ժողովեց այդտեղ կորովի մարդկանց, կազմեց միաբանություն:
- 3) Եթե ես մի օր աշխարհից գնամ, Ո՞ւմ սուս մեղքով ես մեղքդ հերքելու:
- 4) Շահ-Արար սիրով լսեց նրա խնդրանքը, բոլոր հանգամանքների մասին տեղեկություն առավ նրանից, ասպա մեծամեծ խոստումներ անելով կաթողիկոսին՝ եկավ Հայաստան:

17 Ո՞ր նախադասության մեջ բացահայտիչից հետո ստորակետ պիտի դրվի:


- 1) Հակոբին ճանապարհ դնելիս հայրս այդ ահեղ մարդն անգամ չկարողացավ զսպել արցունքները:
- 2) Հայրս որպես իր իմաստունությամբ հայտնի մարդ ինձ ասաց որ մարդ ինչ անելու է մինչև հիսուն տարեկանը պետք է անի:
- 3) Ինձ դաշտային երկրի բնակչիս վրա լեռը որ շեշտակի բարձրանում էր հենց ստորոտից մի առանձնակի դյութական տպավորություն գործեց:
- 4) Սի օր Լոռուց Թիֆլիս Եկավ իմ հին ուսուցիչը Տիգրան Տեր-Դավթյանը դիտելու Շեքսպիրի «Համլետ» ողբերգությունը:

18 Տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից ո՞րն է սխալ փոխակերպված բարդի:

- 1) *Օրերից մի օր՝ հոյակերտ մի դոյակի մոտով անցնելիս, տեսավ գեղանի արքայադասերը:*
Երբ օրերից մի օր անցնում էր հոյակերտ մի դոյակի մոտով, տեսավ գեղանի արքայադասերը:
- 2) *Թշնամուց ճշմարտություն ակնկալող կանխավ հավատում է ստիճ:*
Ով թշնամուց ճշմարտություն է ակնկալում, կանխավ հավատում է ստիճ:
- 3) *Ես հետ էի նայում մերձավորներից բաժանվող աքսորականի նման:*
Ես հետ էի նայում աքսորականի նման, որ բաժանվում է մերձավորներից:
- 4) *Վերջացնելով իր սովորական աղոթքը՝ տասու ներքնակի տակից դուրս բերեց մի փոքրիկ կապոց:*
Երբ վերջացրեց իր սովորական աղոթքը, տասու ներքնակի տակից դուրս բերեց մի փոքրիկ կապոց:

19 Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:

Նս, ով չորեկ էր գետմիմ ու ծնոտը հենել ցանկապատիմ, կանգնեց աճսպասելի, լարվածությունից քրտնեց՝ ճգնելով հիշել, թե ինչու ոտքի ելավ:



20 Ո՞ր տարրերակում ստորոգելի ստորադաս նախադասություն կա:

- 1) Նրա միակ ցանկությունն էր, որ որդին բարձրագույն կրթություն ստանար:
- 2) Ով ամեն օր պայքարում է այս վատ կյանքի դեմ, իմ իդեալը նա է:
- 3) Իմ ուզածն էր այն, որ նա միշտ ինձ հետ լինի:
- 4) Արդյոք ատելուց չէ՞ որ այսքան շատացել են դառնությունները:

21 Ո՞րն է բարդ նախադասություն:

- 1) Սեր առջև Արծրունու միհարկանի տնակն էր՝ շրջապատված շքեղ պարտեզով. մի մասը ծաղկանցն էր, մյուսը՝ մրգանցը:
- 2) Այզու խոտերին սփոռված դեղնագույն դեղձերն ու ծիրանները, արծաթագույն տանձերը, իրար խառնվելով, գույների քմահաճ ներդաշնակությամբ հիշեցնում էին Սպահանի զմայլելի գորգերը:
- 3) Ես, խոսելով Փարիզի՝ այն ժամանակվա հայ գաղութի մասին, չեմ կարող մոռացության տալ իմ հայրենակիցներին՝ ժամանակավոր այցելուներին՝ մի քանի ամսով Փարիզ եկած:
- 4) Երբեք մենք միանգամից չենք հաշտվում մեր գլխին եկած չարիքի հետ՝ մեր սնուտի հույսերը, պարզ է, դնելով նույնիսկ աներևակայելի հրաշքների վրա:

22 Տրված հատվածը Հ. Սահյանի ո՞ր բանաստեղծությունից է:

*Նստում էին և սպասում,
Մինչև պապը գար,
Մինչև բակում Ծաղիկ եղան
Չանզը ծլնգար:*

- 1) «Օրը մքնեց»
- 2) «Անունդ տալիս»
- 3) «Քարափը»
- 4) «Անտառում»

23 Ո՞ր տարրերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:

....., ամեն ինչ ներկայացնում էր առասպելական ասացողի երևակայությամբ:

- 1) Որևէ բան պատմելու ժամանակ
- 2) Որևէ բան պատմելիս
- 3) Չնայած որևէ բան էր պատմում
- 4) Երբ որևէ բան էր պատմում

24 Պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցը գործածված չէ:

*Այնպես զգվող է երեկոն անափ,
Ծաղիկներն այնպես նազով են փակվում.
Ծուրջս վառված է մի անուշ տագնաս,
Մի նոր հուզում է սիրտս մրրկում....*

- 1) համեմատություն
- 2) շրջադասություն
- 3) մակոկիր
- 4) փոխարեռություն

25 Ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:

*Ու պոետներ, որ չեն պղծել իրենց շուրջերն անեծքով,
Պիտի զովեն քո նոր կյանքը նոր երգերով, նոր խոսքով:*

- 1) «Վահագն» (Ե. Չարենց)
- 2) «Հայրենիքի հետ» (Հ. Թումանյան)
- 3) «Սի՞րե վերջին պոետն եմ ես» (Վ. Տերյան)
- 4) «Մեր պատմիչները և մեր գուսանները» (Ա. Խսահակյան)

26 Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարրերակն է համապատասխանում տեքստի տրամաբանական և քերականական միջտ կառուցվածքին:

1. Մի օր, երբ անցնում էր մի ապառաժոտ վայրով, նրան փորձում են հափշտակել այլազգի զինյալներ. օրիորդը խաչակնքում է ու ձիու հետ թռչում քարաժայոից, որպեսզի չընկնի նրանց ձեռքը:
 2. Ավանդությունն ասում է, որ քամու ուժգին հոսանքով ու աներևույթ զորությամբ իշխանադուստրն անվճակ իշնում է ձորի խորխորատը:
 3. Վայոց ձորի ժայռերից մեկը՝ խոր ձորի եզրին կանգնած մի բարձունք, կոչվում է Շահանդուխստի քերծ:
 4. Շահանդուխստը, որ իշխանի դուստրն էր, հրաշագեղ էր, չնաշխարհիկ. նրա գեղեցկությունը զարմանք էր պատճառում տեսնողներին:
- 1) 4, 2, 3, 1
 - 2) 3, 4, 1, 2
 - 3) 4, 1, 2, 3
 - 4) 3, 1, 4, 2

27 Գ. Զոհրապի ո՞ր նովելից է տրված հատվածը:

*«Հու՝ քարահատակ ճամփուն վրա, ճիերու շարք մը կը քալե հազիվ լսելի
ոտնածայնով մը ..., ամրող կարավան մը ծխախոտ փոխադրող շրջակա գեղերեն, ու
տասնի չափ տղաք կուզան քովեն հետիւտն, հրացանը ուսերմում կախած,
ատրճանակը մեջքերնին»:*

- 1) «Այրին»
- 2) «Այինկա»
- 3) «Չարուղոն»
- 4) «Փոստա՛լ»

28 Տրվածներից որո՞ւմ Հ. Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմի բովանդակության վերաբերյալ սխալ չկա:

- 1) Պոեմն սկսվում է «Գործն է անմահ, լավ իմացեք» տողով:
- 2) Թարով իշխանը մատնության զիշերը երագում տեսնում է, որ Թմկաբերդը հիմնահատակ քանդվել է:
- 3) Մահամերձ թարուլը կնոջ մատնության մասին իմանում է վերջին պահին, երբ իր զինվորների մեծ մասն արդեն սպանված էր:
- 4) Մատնությամբ բերդը գրաված շահը հասկանում է, որ կյանքում բախտ, փառք և հաղթություն հաստատ չեն, և պետք չէ հավատալ կյանքում ոչ մեկին:

29

Պ. Դուրյանի ո՞ր բանաստեղծությունից են հետևյալ տողերը.

*Որքան ունիս դու փրփուր,
Միրտս այնքան խոց ունի բյուր:*

- 1) «Իմ ցավը»
- 2) «Սիրել»
- 3) «Տրոտոնցք»
- 4) «Լճակ»

30

Ա. Բակունիցի «Խոնարի աղջիկը» պատմվածքի հերոսը մերժում է Խոնարիի հոր՝ ճաշին իրենց տուն գնալու հրավերը՝

- 1) ասելով, որ արդեն ճաշել է:
- 2) խոստանալով այցելել մեկ ուրիշ անգամ:
- 3) պատճառ բռնելով գրքի ընթերցանությունը:
- 4) պատճառաբանելով, որ այդ օրը պետք է քաղաք մեկնի:

31

Ա. Շիրվանզադեի «Ջառս» վեպի ո՞ր հերոսի խոսքն է.

«19-րդ դարը, սիրելին նա, խարեւորյան դար է, իսկ այդ դարը դեռ չի վերջացել: Այժմ խարում են ամենքը, և ամենից ավելի նրանք, որոնք ըմրուստանում են խարեւորյան դեմ»:

- 1) Մարկոս աղա Ալիմյանի
- 2) Սմբատի
- 3) Սիրայելի
- 4) Իսահակ Մարուբչյանի

32

«Սասնա ծոեր» Էպոսի («Սասունցի Դավիթ» համահավաք բնագիր) բովանդակության վերաբերյալ ո՞ր պնդման մեջ սխալ չկա:

- 1) Դավիթը կոտրում է Մըսրա Մելիքի բանակը, և Մելիքը սարսափիահար փախչում է:
- 2) Փոքր Սիերը ծնվում է՝ ձեռքի ափում մի կաթիլ արյուն սեղմած:
- 3) Ծովինարի խորհրդով իրենց կառուցած ամրոցը Սանասարն ու Բաղդասարը անվանում են Սասուն:
- 4) Մեծ Սիերը և Մըսրա Մելիքը պայման են կապում, որ ով հաղթի մենամարտում, նա դառնա և Սասունի, և Մըսրա թագավոր:

33

Նախադասության անդամներից որո՞նց շարահյուսական վերլուծությունն է ճիշտ:

Ամսույլին զիշեր էր. Ուկանը անցավ հյուսիսային պարսպի մոտով և կանգ առավ մի խրճիթի մոտ, որ մյուսներից փոքր-ինչ ավելի բարեկարգ էր, և որում պայծառ լույս էր վառվում:

1. պարսպի – հատկացուցիչ
2. լույս – ուղիղ խնդիր
3. մյուսներից – ներգործող խնդիր
4. փոքր-ինչ – չափի պարագա
5. ոք – ենթակա
6. կանգ առավ – բաղադրյալ ստորոգյալ

34 **Ո՞ր բառերում մեկից ավելի հնչյունափոխություն կա:**

1. հանդենել, 2. հետաքննություն, 3. աստղադիտարան, 4. մեղվարուծություն,
5. մանրախնդրություն, 6. ուղղամտորեն, 7. ահազնանալ, 8. ծաղկաշղթա

35 **Ո՞ր բառերն են միմյանց հոմանիշ:**

1. սաղավարտ, 2. դարան, 3. որոգայթ, 4. շառափ, 5. ականատ, 6. թակարդ, 7. կառափ,
8. մկունդ

36 **Ո՞ր նախադասություններում կապ չկա:**

1. Բայց սովորաբար նա ինձ մոտ է գիշերում. այս երեկո եթե վաղ գա, հենց այս գիշերվա գնացքով կճանապարհեմ:
2. Չիմացա՝ ինչպես ճաշեցի, որովհետև ինձ շատ էր հետաքրքրում այն տեսակցությունը, որ պիտի ունենայի Սառայի հետ:
3. Դու, մայր Արաքս մեր քերթության, Առ ինձ գիրկդ, տա՛ր ինձ հեռու:
4. Նա, ըստ այդ որոշման, պետք է հանդիպեր նրան որևէ չեզոք տեղում և հասցներ ազարակ:
5. Հասկանալի էր, որ ինձ վիճակված չէր նման պայմաններում հանգիստ խղճով գրաղվել իմ գործով:

37 **Ո՞ր նախադասություններում է շաղկապը կապել նախադասության անդամներ (նախադասությունները կետադրված չեն):**

1. Կին թե տղամարդ դուրս էին եկել տներից:
2. Այդ ներկայացումը ծնվել էր թախծից գուցե սիրուց բայց ոչ սին հպարտությունից:
3. Միլիոնատիրոջ և առքատ աղջկա միջն չի կարող լինել ոչ մի առնչություն:
4. Հանկարծ մի լույս ցայտեց և սկսեց պտտվել վանքի խոժոռ պատերին:
5. Չեկա և չիմացա ոչինչ:

38 **Ո՞ր բվերի տեղում բութ պիտի դրվի:**

Արտաշես թագավորի ժամանակ Հայաստանի կյանքը բարեկեցիկ էր երկիրը(1) ծաղկուն էր: Սիրելով իր թագավորին(2) ժողովուրդը նրա կյանքի հետաքրքիր դեպքերը գեղեցիկ գրույցներ դարձրեց: Մովսես Խորենացու գրքում նկարագրված պատմություններից մեկի(3) Արտաշեսի(4) ալանների դեմ մղած պատերազմի նյութը պատմիչը քաղել է Գողթն զավառում(5) այն ժամանակ դեռևս պահպանված երգախառն գրույցներից: Եթե ալանների թագաժառանգը գերի է ընկնում նրա քույրը բարձրանալով Քոի ափին գտնվող մի ժայռի վրա(6) խնդրում է(7) վերադարձնել եղրորը: Արտաշեսը սիրահարվում է ալանների արքայադաստերը(8) չկարողանալով վճարել հազարավոր ուկիներ փախցնում է նրան:

39 **Տրվածներից քանի՞սն են ցուցական դերանուն:**

սույն, միմյանց, որտեղ, ինչքան, միևնույն, մյուս, այդշափ, ինչպիսի

40 **Բառերից քանի՞սի՞ բաց թողած տեղում է գրվում *հ*:**

արհամար-ել, անշնոր-ք, ամպ-ովանի, խոտ-արք, հայ-ոյանք, հեղ-եղուկ, ընդ-անուր, անհողդ-ողդ

41 Բառագույզերից քանիսի՞ բառերը հականիշներ չեմ:

փխրուն-պինդ, ճապաղ-թերի, անաշառ-կողմնակալ, հարթ-խորդուբորդ, էական-անկարևոր, տիվ-ցերեկ, չքանալ-հայտնվել, առանձին-խմբովին

42 Նախադասություններից քանիսո՞ւմ են ընդգծվածները միմյանց կապակցված խնդրառությամբ:

- Լուսաթաթախ սպասումի մեջ ինչ-որ հաճելի հուզմունք էր ալեկոծել Մարանին:
- Սիրում եմ աչքերիդ տիսրությունը խորին:
- Լևոնին հայտնեցի Լուիզայի ուղևորության մոտալուտ ժամանակը:
- Առանձնացավ ընկերներից ու շարժվեց դեպի փողոց:
- Վեհանիստ լեռան գագարը կարծես աննյութական էր:
- Այնուհետև մենք եւ չինք լսում նրա ձայնը:

43 Նախադասություններից քանիսո՞ւմ հարակատար դերքայ չկա:

- Մայրը ուշադիր հետևում էր, մինչև որ որդին անցավ սառցակալած ճանապարհը:
- Նա գիտակցում էր, որ վաղ թե ուշ պետք է վեր կենա ու երես առ երես նայի իր հետևում կանգնածին:
- Վայրկյաններն անցնում էին, և նա հասկանում էր, որ մոտենում է այն պահը, երբ ինքը հարկադրված վայրէջք պիտի կատարի:
- Զեյթունը մի բուռ մոխրակույտ է դարձել. հիսուս հոգի են վերադարձել կոտորածից, և քաղաքն ավերակ է:
- Բաժակը, որ արդեն մոտեցրել էր շուրթերին, դրեց սեղանին և դիմեց մեզ անհանգիստ ու հուզված:

44 Նախադասություններից քանի՞սն են միջին հայերենով:

- Թույլ շրջյուն մը, հետո բույր մը մշկենի. Եվ համրազին զիրքը ձեռքես կ'իյնա վար:
- Զիմ եարն ամանար կու տամ. ի վարդին մէջն պահեցէք. Թէ երթամ ու շուտով դառնամ, զամանաթս ի տէ՛ր հասուցէք:
- Ընդ եղեգան փող ծո՛իս ելաներ, Ընդ եղեգան փող բո՛ց ելաներ, Եւ ի բոցոյն վազէք խարտեաշ պատաճեկիկ:
- Դըռանս առջև կը նըստիմ միշտ տրխրալիր, Լուր կ'ուզեմ վրադ ամեն կրունկէ՝ որ կ'անցնի:

45 Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել Շիշտ է, Միսալ է, Չզիտեմ տարբերակներից որևէ մեկը:

1. Զայնարկությունները, կապերը և շաղկապները հոմանիշներ չեն ունենում:
2. Նույն երևույթի՝ սաստկության տարբեր աստիճաններ արտահայտող բառերով կարող են հոմանիշային շարքեր կազմվել:
3. Հականիշները կարող են լինել նույնարմատ և տարարմատ:
4. Համանուն են այն բառերը, որոնք արտահայտում են նույն կամ նման իմաստներ:
5. Որոշ դարձվածքներ ունեն իրենց հոմանիշ դարձվածքները:
6. Այն բառերը, որոնք արտահայտում են տարբեր իմաստներ, կոչվում են հականիշներ:

Բ մակարդակ

46 Համարակալված բառերում բաց բողած տառերը (տառակապակցությունները) պատասխանների ո՞ր շարքում են ճիշտ նշված:

Աղջամուղջը հետզիետե ան-ացավ(1)՝ իր տեղը զի-ելով(2) արևի շառագույն ճառագայթներին: Բնությունը զար-նեց(3): Ծառերի և ծաղիկների սաղար-ներին(4) նստած ցողը մեղմ-բեն(5) գոլորչիացավ, և յուր-րինակ(6) փայլով շողշողաց մուգ կանաչ բուսականությունը: Պ-նված(7) սալորենին նազեց՝ ասես համրույր ուղարկելով ճ-դերին(8) բառած արագիլներին: Արքնացան նաև ծաղիկները՝ զինարրու-ը(9), սուսա-բարը(10), վարդը:

- 1) 3-թ, 6-օ, 9-կ 10-ն
- 2) 1-է, 5-ն, 8-յու, 10-ն
- 3) 2-չ, 3-թ, 7-ճ, 9-կ
- 4) 1-է, 4-թ, 7-ճ, 9-կ

47 Ո՞ր շարքի բոլոր բառերում արմատի հնչյունափոխություն կա:

- 1) մրցակարգ, հայրենադավ, վրիպակ
- 2) մշակութային, միջադեպ, վիճահարույց
- 3) հրակայուն, ձվածեղ, որդեսեր
- 4) փափկակյաց, ձուլածո, վարչակազմ

48 Ո՞ր շարքում համանուն չունեցող բառ կա:

- 1) անձուկ, փող, բառ
- 2) խոզուկ, մարտ, զառ
- 3) հազար, հանդերձ, կետ
- 4) կուռ, խատուտիկ, աղոտ

49 Ո՞ր շարքում բառի սխալ բացատրություն կա:

- 1) ակնակապիճ-աչքի խոռոշ, սուտակ-կարմիր գույնի բանկարժեք քար
- 2) պատրվակ-մտացածին պատճառ, խոյակ-քանդակազարդ սյունազլուխ
- 3) խաժ-կապույտին տվող կանաչ, սննդուր-ուկերել կամ արծաթաթել գործվածք
- 4) կոնդակ-կարողիկոսի պաշտոնական գրություն, դարձերես-թղթի հակառակ կողմը

50 Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությամբ բարդ:

- 1) մրգատու, օրավուր, պարահանդես
- 2) սարկամիտ, շրջանավարտ, խաղակես
- 3) սպիտակաբույր, փաստարկ, բերքահավաք
- 4) քարանձավ, սառցալեռ, ծաղկաթերթ

51 Ո՞ր շարքի բառերից ոչ մեկում հոդակաա չկա:

- 1) լայնեզր, ազգուտակ, դառնանուշ, անախորժ
- 2) ելեէջ, հայազգի, բարետես, բնեոաղվես
- 3) զահերեց, շողակն, շոգեջեռուցում, ճարտասան
- 4) ճենապակի, հեծանիվ, հնավանդ, ծանրաշարժ

52 Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությամբ պարզ:

- 1) աշխույժ, տեսակ, ավարտ
- 2) ապահով, ապավեն, աշտարակ
- 3) պարտեզ, ըմպանակ, հրահանգ
- 4) խրճիթ, լիցք, հրավեր

53 Ո՞ր շարքում են բոլորը տրված իմաստն արտահայտող խոսքի մասի պատկանող բառեր:

- 1) նյութական – ամենքը, երբեք, ցավոք, այնքան
- 2) վերաբերմունքային – իհարկե, բնականարար, այսինչ, ահա
- 3) քերականական – ի պատիվ, օրոք, քանի դեռ, արդյոք
- 4) նյութական – հոտնկայս, նկատառում, չրիսկալ, առաջնային

54 Ո՞ր նախադասության մեջ պակասավոր բայ չկա:

- 1) Ես չգիտեմ՝ ուր են տանում հեռավոր Ուդիների ժապավեններն անհամար:
- 2) Մտածում էինք, թե ինչ պիտի ուտեր ճանապարհին, ինչպես պիտի հասներ քաղաք:
- 3) Ո՞ր աշխարհում ունեմ շատ բան՝ Սիստը եմ անում՝ է՞ս, թե՞ են:
- 4) Երբ նայում է, որ ափերին ես չկամ, Մոլորվում է Լորագետը ու գնում:

55 Ո՞ր նախադասության մեջ վերաբերական չկա:

- 1) Բրոնզաձույլ արձանի լուրը իսկույն ևեթ տարածվեց աշխարհով մեկ:
- 2) Բախսող հո չէ՞ր կարող լինել այնքան անողոք, որ իր մեկ լրիվ օրվա չարչարանքն անտեղի անցներ:
- 3) Եթե ինչ-որ տեղի է ցավում, Իսկույն բուժեմ լոկ հայացքո՞վ:
- 4) Թե՛ կոհիվը անխուսափ է, Թող չկովեն երկու երկիր, այլ մարդ ու կին:

56 Ո՞ր տարրերակում բաղադրյալ ժամանակած կա:

- 1) զգալ կտա, կանգ էր առել
- 2) դուրս եկավ, մի՛ վարանիր
- 3) եփեցինք-քափեցինք, չպիտի լսես
- 4) թոյլ մի՛ տուր, սիրտ արեց

57 Ո՞ր նախադասության մեջ շարադասության սխալ կա:

- 1) Եզակի հայկական ճարտարապետության անգնահատելի կոբողներից է Գանձասարի վանքի համալիրը, որ գտնվում է Արցախի Մարտակերտի շրջանում:
- 2) Նավաբեկուրյանը վերաբերող իրավունքը միջազգային իրավունքի հիմ կետ է, ըստ որի՝ նավաբեկուրյան հետևանքով ափ նետված կամ մերձափնյա մասում հայտնաբերված ողջ գույքը հանարկում է առավինյա տարածքի գերիշխանի սեփականությունը:
- 3) Աֆրիկյան արշավանքի ժամանակ Կեսարը նավից իջնելուց հետո սայթաքեց, վայր ընկալ ու ամենին չկորցնելով իրեն՝ ամուր գրկեց հողը և հանդիսավոր հայտարարեց. «Դու իմ ծեռքերում ես, Աֆրիկա»:
- 4) Մարդն իր ամբողջ կյանքի ընթացքում կատարում է մոտ 700 միլիոն շնչառական գործողություն, և շնչառական ուղիներ բափանցող օդն ամենուրեք հանդիպում է լորձապատ մակերևույթի:

58 Ο՞ր տարրերակում ենթադրական եղանակի բայաձև կա:

- 1) Ինձ թվում էր, որ այդ նավերով գնացողները պիտի խղճան մնացողներին՝ որպես բախտից զրկվածների:
- 2) Կապտավուն սարերն այնքան մոտ, այնքան պարզ էին երևում, որ հեռվից կարելի էր համբել նրանց մաքուր լանջերի բոլոր ձորակները:
- 3) Սինչև նրանք կհասնեին վրաններին, շները հարձակվեցին ձիավորների վրա:
- 4) Առաջին հայացքից կարծես թե հանցանքը մատնող որևէ նշան չէր կարող երևալ:

59 Ο՞ր նախադասության մեջ որոշիչ հոդի գործածության սխալ չկա:

- 1) Երբ շնչելը անակնկալ դժվարացավ, Ալխոն հասկացավ, որ զարիվերն սկսվել է:
- 2) Կանչենք այն մարդկանց, որոնք սպասում են իրենց մրցանակներին, պարզեցներին կամ որևէ այլ նվերին:
- 3) Ամոռան երկար օրերին էլ արևն հազիվ մի քանի ժամ է լույս տալիս Մթնաձորի անտառներին:
- 4) Հանկարծ քույրն երևաց, ինձ տեսավ և կարծեց, թե հանդիմանելու եմ ուշացման համար:

60 Ο՞ր տարրերակում դերբայական դարձված կա:

- 1) Խոնարհվելով բարեւելը սովորություն էր դարձրել:
- 2) Լաց լինող երեխան մորն էր կորցրել:
- 3) Ընկնելով ու վեր կենալով շարունակում էին երթը:
- 4) Պահակը գույնը գցած վազում էր շինության պարսպի երկայնքով:

61 Ο՞ր նախադասության մեջ է ընդգծված տեղի պարագա:

- 1) Ես կուզեի արևավառ աճապատր ամայի, ուր մեն-մենակ ու վշտահար թափառեի ու լայի:
- 2) Տերը տեղին վճարելով վարորդին՝ իջավ մերենայից:
- 3) Կուրծքը սպիտակ ջրածտերը թոշում են քարից քար, կրծքները երերացնում, ծվծլում:
- 4) Գյուղից ներքև՝ մի քարծր ժայռի մոտ, գետն արմունկ է կազմում ու կորչում քարերի արանքում:

62 Ο՞ր նախադասության մեջ բաղադրյալ ստորոգյալ չկա:

- 1) Սիրտը նույնական խարվում է, ինչպես և բանականությունը. նրա մոլորությունը ոչ պակաս կորստաքեր է:
- 2) Առաջինները նրանք են, ովքեր կարողանում են ամեն ինչ ճեղքել:
- 3) Չեմ սիրում, երբ թիկունքիս հետևից օտարն իմ նամակն է կարդում:
- 4) Պայծառ աշխարհում կլինենք մենակ, Յավ կյանքի մեռնող լույսերից խարված:

63 Ο՞ր նախադասության մեջ ընդգծվածներից ոչ մեկը որոշիչ չէ:

- 1) Ու զանգերն այն լալազին Սեռնող իմ երկրում Չեն հուզելու քո հոգին Տիրությամբ անհում:
- 2) Թշնամին եկավ մութի պես կամաց, Ամենքն ահարեկ փախան դեպի սար:
- 3) Նորից կրողնեմ քաղաքն աղմկոտ Ու ճամփա կընկնեմ հավետ միայնակ:
- 4) Բոլոր ահերն ինձնից վանում, Պարզ եմ նայում ապագային:

64 Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա:

- 1) Գիշերը անքուն բափառեց Ադամը՝ երգելով իր ցավագին կարոտը, և անհուն կսկիծից փոքրորկվեց սիրտը:
- 2) Մի ուրիշ օր զբոսնում էին Վանա փթթող այգեստաններում, որոնք քաղաքի հարավարևելյան կողմից տարածվելով դեպի հարավ-արևմուտք՝ ամփոփում էին իրենց մեջ փոքրիկ ավաններ, շենքը ու գյուղեր, իշխանական ամառանոցներ:
- 3) Բացված ձեռագրի մի կեսը, թվում է, կապույտ ստվերի մեջ է, մյուսը՝ երկաթյա եռաժամի մոմակալի դեղնակարմիր կայծկլտուքների տակ, և նրա վրա նշմարվում էն նոտրագիր տողերը:
- 4) Եվ ամեն օր հոգու թրթիռով նայում էր աշխարհին և ամեն օր զարմանում այնպես, որ թվում էր՝ առաջին անգամ էր տեսնում աշխարհը:

65 Մ. Սեծարենցի ո՞ր բանաստեղծությունից է տրված հատվածը:

*Թույլ շրջյուն մը, հետո բույր մը մշկենի.
Եվ համրազին զիրքը ձեռքես կ ՚իյնա վար...*

- 1) «Արևին»
- 2) «Սիրերգ»
- 3) «Վայրկյան»
- 4) «Արասիաներու շուքին տակ»

66 Ո՞ր շարքում կա ստեղծագործություն, որի հեղինակը Ե. Չարենցը չէ:

- 1) «Տաղ անձնական», «Սի՛ խառնեք մեզ ձեր վայրի արջի ցեղերին»
- 2) «Անվերնագիր», «Անակնկալ հանդիպում Պետրոպավլովյան ամրոցում»
- 3) «Գանգրահեր տղան», «Մահվան տեսիլ»
- 4) «Դանթեական առասպել», «Ես իմ անուշ Հայաստանի»

67 Համարակալված բառերից որո՞նք են ածական:

Չեմ սիրում այդ երաժշտությունը. 1. դաժան է այն: Նայում եմ մյուսներին. ոմանք նստել են 2. աճտարբեր հայացքով, ոմանք՝ 3. ներանձնացած: 4. Ամեն մարդ 5. զող աշխարհ է՝ անիմանալի ու 6. անմատույց: Տարիներ հետո ոչ ոք չի մնալու այս 7. ապրող բազմությունից: Բայց աշխարհը 8. տակավիճ իմն է ու ձերը:

68 Ո՞ր նախադասություններում վերաբերության անուղղակի խնդիր կա:

1. Խոսում էինք մեր անցյալ օրերից, լավ հիշողություններից: 2. Մեկը իր տեսած երազն էր պատմում, մյուսը՝ տնից ստացած տեղեկությունները: 3. Ապա զրուցում էինք մեր ճանապարհորդությունների, մանկության, սիրո, արկածների շուրջ: 4. Յուրաքանչյուր ոք աշխատում էր սփոփել մյուսին: 5. Երբ դրսից մեկը մի բան էր ստանում՝ ծխախտ, շաքար, միրգ, խկույն սիրով բաժին էր հանում ուրիշներին: 6. Բոլորս միմյանց վերաբերվում էինք սիրով ու հարգանքով:

69 Ո՞ր մտքերն են բխում տեքստի բովանդակությունից կամ չեն հակասում նրան:

16 երկրներից հավաքած 250 հոգանոց զիտական մի ընկերություն գրադաւում է զիտության համեմատաբար նոր բնագավառով՝ մումիաների արտաշիրմումով, ինչի նպատակը դրանք բժշկական քննության ենթարկելն է: Յուրաքանչյուր անգամ հանդիպումը կայանում է այդ երկրներից որևէ մեկում: Խմբի վերջին հանդիպումներից մեկը կայացել է Դետրոյուտում: Այս անգամ ուսումնասիրության առարկան մի եղիպտուհու մումիա էր՝ շիրիմված 2000 տարի առաջ: Հետազոտության ընթացքում քննվեցին բոլոր օրգանները՝ բացի ուղեղից. այս մումիայի զանգում այն բացակայում էր, սակայն զանգն անվճական էր: Կա տեսակետ, ըստ որի՝ մինչ բալզամացումը եղիպտուացիները ուղեղը հեռացրել են քրանցքերով, ապա ամբողջ մարմինը ծածկել են քսան շերտ հեշտ ներծծվող կտորով և պատել սոլայազիպտվ հազեցած խյուսով:

Բազմաթիվ մումիաների քննություններից պարզվել է, որ հնագույն ժամանակներում նույնպես մեծ տարածում են ունեցել այսօր մարդկության անհանգստացնող սրտանոթային, հողային հիվանդությունները, իսկ ունտղենուկոպիկ սարքերը փաստեցին ողնաշարային ախտերի տարածվածության մասին:

1. Սումիաների ուսումնասիրությունները փաստում են, որ իին ու նոր ժամանակների մարդիկ հաճախ տառապել են միննույն հիվանդություններով:
2. Կա տեսակետ, որ մինչ բալզամացումը պարտադիր պայման է եղել մահացածի քրանցքերով ուղեղի հեռացումը:
3. Դետրոյուտը եղիպտական մումիաների մերօրյա հետազոտությունների կենտրոնն է:
4. Վերջին հանդիպման ժամանակ հետազոտված մումիան բալզամացվել էր բոլոր օրգաններով հանդերձ՝ բացի ուղեղից:
5. Ունտղենուկոպիկ սարքերով ուսումնասիրությամբ պարզվել է, որ հնադարում ողնաշարային տարբեր հիվանդությունները բոլոր ախտերից ամենատարածվածն են եղել:

70 Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել **Ճիշտ է, Միսալ է, Զգիտես** տարբերակներից որևէ մեկը:

1. Ներգոյական հոլովով դրված գոյականը կարող է համանունություն կազմել նույնարմատ անկատար ձևաբայի հետ:
2. Ներգոյական հոլովը կազմվում է **ուժ** վերջավորությամբ կամ **սեռական հոլով+սեռ կապակցությամբ**:
3. Ոչ բոլոր գոյականներն են գործածվում ներգոյական հոլովով:
4. Ժամանակի պարագան կարող է դրվել ներգոյական հոլովով:
5. Ներգոյական հոլովով դրված բառը կարող է գործածվել կապերի հետ:
6. **Ոչ** դերանունը ներգոյական հոլովի ձև չունի: